



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 269

ք.Արփաշապ

24 10 2018թ.

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2018 թվականի տարեկան ծրագրով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի << Տափերականի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ում 2018 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի << Տափերականի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի կողմից մինչև աուդիտի մեկնարկման օրը 2015, 2016, 2017 ինչպես նաև 2018 թվականի՝ ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ